

ԳԵՎՈՐԳ ԷՄԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՐԵՇՏԱԿԸ

1988 թվականի մեծ երկրաշարժին զոհված հայ մանուկների հիշատակին:

Երկու տարեկան այս հայ երեխան
Այդպես էլ մնաց... երկու տարեկան.—
Սումգայիթ տեսավ մի տարեկանում,
Երկուսում՝ զոհվեց Զաջուռ ավանում.
Զոհվեց ու թաղվեց, բայց... չմահացավ,
Վիրավոր սգվոր հրեշտակ դարձավ
Եվ սավառնում է հիմա երկնքում,
Մեզ հառած աչքերն իր սև ու տրտում...
Սավառնում է նա, ու նրա տեսքից
Դաշույնն ընկնում է դահիճի ձեռքից,
Զար մարդկանց սրտերն իսկույն մեղմանում
Եվ գազանները ... եղնիկ են դառնում.
«Հայաստանն է սա»,—ասում են նրանք,—
Տեսնո՞ւմ եք լուսե պսակը նրա,
Ինչ են նրա մեծ տառապանքի դեմ
Մեր կռիվներն ու վեճերը նսեմ...
Հայաստանն է սա—Ոգին Հարության
Դռնորն՝ Ազնիվի և Արդարության,
Որ իր արյունն է տվել դարեդար
Ամեն մի ազգի պայքարին արդար:
Կարո՞ղ էր մեկին Արարիչը մեր
Պարգևել այսքան ցավ ու դառնություն,
Եթե նա մի նոր Մեսիա չլիներ,
Զուտենար մի սուրբ Առաքելություն ...
Եվ ոխ ու չարիք մի պահ մոռացած,
Ասես մի մարմին ու հոգի դարձած
Այդ հրաշքին են նայում բոլորը,
Ինչպես մոգերը՝ Աստղին Հիսուսի ...

Երևան,
1988 դեկտեմբեր